ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

---

# ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 31** քաղ. Մոսկվա

**«Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 79 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի մասին**

«Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 79 որոշման 1-ին կետում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի որոշման 2-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 79 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է) եւ ներկայացնել այն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

| Հայաստանի Հանրապետությունից՝ | Բելառուսի Հանրապետությունից՝ | Ղազախստանի Հանրապետությունից՝ | Ղրղզստանի Հանրապետությունից՝ | Ռուսաստանի Դաշնությունից՝ |
|---|---|---|---|---|
| Վ. Գաբրիելյան | Վ. Մատյուշեւսկի | Բ. Սագինտաեւ | Օ. Պանկրատով | Ի. Շուվալով |

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

ՈՐՈՇՈՒՄ

«  »  -ի 20  թվականի  **թիվ**  քաղ.

**Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 79 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետին եւ 20-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ Եվրասիական տնտեսական միության բյուջե կատարվող բաժնեմասային ներդրումների չափերի (սանդղակի) մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 79 որոշման մեջ կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) 1-ին կետի առաջին պարբերության մեջ «2016 թվականի» բառերից հետո ավելացնել «եւ հետագա տարիների» բառերը.

բ) 3-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությունով՝

«Յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների փոփոխման դեպքում՝ Միության բյուջե անդամ պետությունների կողմից կատարվող բաժնեմասային ներդրումների չափերը (սանդղակը) ենթակա են ճշգրտման եւ կիրառվում են Միության բյուջեի ձեւավորման եւ կատարման նպատակներով՝ սկսած նորմատիվների փոփոխման տարվան հաջորդող տարվանից։»։

**Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝**

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետությունից՝** | **Բելառուսի Հանրապետությունից՝** | **Ղազախստանի Հանրապետությունից՝** | **Ղրղզստանի Հանրապետությունից՝** | **Ռուսաստանի Դաշնությունից՝** |